



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱԳԱՐ-
ՃԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԾԱ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌՅԽԵ Լ. ՏԱՐԻ

ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԳ

ՓԵՏՐՈՒՄ 1897 թ.

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԾՇՄԱՐԻՑ ՀԵՐՈՍԸ.

„ԾԹԷ տակաւն մարդկան հաճոյ լինէի,
ապա Զրիստոսի ծառայ ոչ էի“:
Գաղ. Ա. 10.

Տակաւն . . . ինչպիսի տխուր յիշատակներ են ամփոփուած արդեօք այդ մէկ հատիկ բառի մէջ: Կար ժամանակի երբ Տարսնացի Պօղոսը բոլորովին ուրիշ մարդ էր, ուրիշ գաղափարներ, ուրիշ զգացումներ ունէր. նա աչքի ընկնող մի անդամն էր այն գասակարգի, որ իբրեւ մարդաշահութեան տիրար է ներկայանում մեզ ս. աւետարանի մէջ, որի մասին առանց զայրոյթի և արգար ցաս-

ման խօսել չէ կարող հեղ և անյիշաչար Մարգոյ Որդին: Անշուշտ աւելի բարեմիտ էր նա և ազնիւ քան ուրիշները՝ արգարութեամբ ու խղճի մտօք նախանձախնդիր հայրենի աւանդութեանց. բայց որ գոնէ մի բանում նա էապէս չէր տարբերուում իւր ընկերներից, որ նա նոյնպիսի հեշտութեամբ էր ենթարկուում մարդաշահութեան կախարդի դիւթական գաւազանին: Ինչպէս ամեն մի փարիսեցի, ինչպէս ամեն մարդ՝ այս տեսակետից աւելի կամ պակաս չափով փարիսեցի ի բնէ—ահա նա անձամբ խոստովանում է այստեղ: Եւ յիշաւի՜ քանի՜ քանի անգամ բազկատարած աղօթքի է կանգնել նա Աստուծոյ տաճարում, աչքի տակից նայելով թէ արդեօք մարդիկ

տեսնում են իւր բարեպաշտութիւնը՝ ողորմութեան լուսաներ բաշխել տաճարի մուտքի առաջ շարուած մութաղցկաններին: այն հրապարտ գիտակցութեամբ թէ ամբողջ գիտում է և հռչակում իւր բարեգործութիւնը ինչպէս ինքնազոհ և ժպտերես նա ամեն անգամ ծիլղժ ժամանակին բերել քահանաների առաջն է դրել իւր առատ նուէրները իւր տասանորդները՝ ինչպէս զլեփն փոշի ու մոխիր ցանած, դէմքը մռայլ ու մազերը գգգգուած անցել Երուսաղէմի փողոցներից, որպէս զի ամէնքը ճանաչեն Գամաղիէլ մեծ բարբու արժանաւոր աշակերտին: տեսնեն նորա օրինապահութիւնը նորա նախանձախնդրութիւնը, Դսրայէլի փրկութեան համար թափած արցունքները: Եւ մինչև իսկ այն բոլորին երբ նորա աչքի առաջ արինչուայ ընկած էր նահատակ Ստեփաննոսը, և նա մօլեռանդ ընկերների հանդերձներն էր պահում, ձեռքով զլսով քաջայերում նոցա՝ երբ Գամաղիսի ճանապարհին ծրագրերն էր կազմում ջնջելու մի քանի օրուայ մէջ արմատախիլ անելու յաշնեցեալի մօլար աղանդը, և Դսրայէլի ահեղ Աստուծոյ պատիւը վերականգնելու՝ նորան առաւել ոգեւորողը և փայփայողը գուցէ այն հրապուրիչ զգացումն էր կրկին, թէ ինչպէս պէտք է գովեն ինչպէս ամեն աեղ մատով ցոյց տան բոլոր ընկերներից յառաջագէմ Սօլոմոն:

Սակայն ինչքան բան փոխուել է այն օրից, երբ նորա տկանջին հնչեց իւր հալածած Երուսալի հրաշագործ ձայնը. հպարտ փարիսեցին Արրահամի ազատ զաւակը՝ նոյն այդ Երուսալի ծառան է այժմ՝ Զրիստոս է անուանում, ընտրեալ ժողովրդի բոլոր աւերակալութեանց կատարումն մի դատապարտեալի, ամենաանարգ մահուամբ աշխարհից մերժուած մի օրինադանցի, և պատրաստ է ամեն ամեն ինչ կորցնել, և փառք, և պատիւ, և երջանկութիւն՝ այդ Զրիստոսին միայն շահելու համար: Նա նոյն Սօլոմոն է, առաջուայ պէս եռանդուն և նախանձախնդիր և յառաջագէմ, սակայն նորա եռանդն ու նախանձախնդրութիւնը մի երեւուն եղեգն չեն այլ ևս, որ ամեն թեթեւ հօդից տատանուում է, այս կողմ ու այն կողմ խոնարհում՝ երբեմն

այս երբեմն այն օրէնքի երբեմն մէկ երբեմն միւս բարբու վճռի առաջ, երբեմն ի հաճոյս իւր սեփական կրքերի, և երբեմն իւր դասակարգի շահուցն ու զաղանի հաշիւների՝ այլ իրեւ մի միապաղապ անվանդ ժայռ, անսասան հիմքի վերայ հաստատուած, որ ոչ ոլորապաշտոյս յորձանքների քայքայիչ ազդեցութեանն է ենթարկուում: ոչ կատաղի փոթորկի բռնութեանը՝ ոչ սաստիկ տապից հալուում է ծիրում, ոչ սառնամանիքի խստութիւնից պատառ պատառ լինում: Մի հեղ զառն է նա, մի տկար մանուկ, երբ Տէր Երուսալին է փարած, ամենաանարգ գերի է համարում իրեն, կծկուում հող ու փոշի է դառնում՝ անարժան Նորա երկնակոխ ոտքերին իսկ կպելու. բայց երբ հանդէս է գալիս աշխարհի առաջ, խրոխտ առիւծ է, անպարտելի հսկայ, որ անվիհեր համարձակութեամբ թէ կատաղած ամբոխին և թէ եկեղեցւոյ սիւն ստգտեալ Պետրոսին, թէ Հրէից քահանայապետներին ու նախանձայող փարիսեցիներին և թէ Աղբիւրպա թագաւորին կամ նոյն ինքն Հռոմի մեծագոր կայսեր դէմ դնել կարող է՝ ոչ մի մարդկային հեղինակութեան համար փոյթ ունենալով, ոչ մի երկրաւոր ոյժի զիմաց տեղի տալով: Ցարսոնացին հերոս էր մի ժամանակ շատերի աչքում, այժմ մի խեղճ հալածական է, որ ուր գնում նախապէք և դառնութիւն է գտնում. «վիշտս ի զեռոց, վիշտս յաւաղակաց, վիշտս յաղղէ, վիշտս ի հեթանոսաց, վիշտս ի քաղսքի, վիշտս յանապատի, վիշտս ի ծովու, վիշտս ի սուտ եղբարց», և սակայն, ո՞վ է այն մեծ հերոսը, որ յաղթական կռքի մէջ, դալին, պատկերով շրջապատուած՝ աւելի վսեմ, աւելի զօրեղ, աւելի հերոսական զգացումներ է ունեցել, քան այդ հալածականը, երբ կրծքի խղիւղից բացականչում էր. «Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Զրիստոսի ծառայ ոչ էի»:

Պատմութիւնը շատ հերոսների անուններ է մեղ յիշեցնում՝ հերոսներ ամեն կարգի և տեսակի. ոմանք զերազանցել են մարմնական ուժով՝ բնութեան յամառ տարրերը նուաճելու, փայլերի գաղտններին զսպելու համար ցոյց տուած ճարպիկութեամբ և զօրութեամբ՝ ուրիշները քաջ սրտովն ու ռազմական հրմ-

տութեամբ որով արեան նախճիրներ են դործել, բանակներ ու ամրութիւններ խորտակել, ազգեր ու պետութիւններ միմեանց հետ ձուլել, ոմանք աչքի են ընկել բնական հանճարովի գիտութեան և արուեստի մէջ հանդես բերած կատարելութիւններով, մարդկային կեանքի յառաջադիմութեան և բարելաւութեան նպաստող հրաշալի գիւտերով՝ ուրիշները բարոյական կամքի զօրութեամբ, մարդոց կառավարելու ընդունակութեամբ, օրինակելի առաքինութիւններով, մեծամեծ բարի գործերով, ընդարձակ ձեռնարկութիւններով, մենք աշխատում ենք անձինջ և կենդանի պահել նոցա անունները, իւրաքանչիւր նոր սերունդի առաջ կրկնել նոցա յիշատակի արժանի գործերը, որպէս զի օրինակ լինին, կեանքի ուղիղ ծանապարհը ցոյց տան, նման առաքինութիւններ ներշնչեն, նման գործեր անելու քաջակերն, բայց սրդեօք նոցա շարքում մեր յիշողութեան մէջ իւր արժանաւոր տեղն է գրաւում Պօղոս առաքեալի անունը, արդեօք գիտակից ենք մենք, թէ ի՞նչ ահագին զօրութիւն ունի աշխարհում, ինչպիսի կորստաբեր ազդեցութիւն մարդոց վերայ՝ մարդահաճութեան փորձիչ գեւը, և Առաքեալի հետ ծունկ չոգելով Աստուածորդու առաջ, Նորան՝ միակ ճշմարիտ և անմահ հերոսին, առաջնորդ և տիպար մեզ ընտրելով, սովորում ենք յաղթել Նորա հոգեով իսկական բարոյական արժանաւորութեան այդ ամենաօխերիմ և ամենափտանդաւոր թշնամուն, Նորան միայն ծառայել՝ Նորա ցոյց տուած ճշմարտութեան, արդարութեան և սրբութեան գաղափարին:

Ահա քայլում է Նա կրկին մեր առջևից՝ դէպի տանջանք, խաչելութիւն, դէպի մահ: Թայտնութեան օրից սկսած քայլ առ քայլ հետեւում է Նորան փորձիչը՝ մերթ առապատի միայնութեան մէջ բազմահրապոյր խօսքեր շնչելով, մերթ հաղարդիւնեան ամբոխի կողմից օվսաննա կոչելով, մերթ մտերիմ աշակերտի միջոցաւ փառաց ու վայելութեան շքեղ տեսարաններ Նորա առաջ բանալով: «Ձայս ամենայն քեզ տաց» եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ, բաւական է հաճոյ Ղիւնիս այդ ամբոխին, նորա փարիսեցի կառավարիչներին՝ նոցա ցանկութիւնները կատա-

րես, նոցա հայեացքներին համակերպիս— քեզ իսկոյն ձեռքի վերայ կրարձրացնեն, թագաւոր և իշխան կհռչակեն, փառօք ու պատուով կպսակեն: Բայց Նա անցնում է բարձր ի գլուխ այս բոլոր փորձութիւնների, այս անմիտ բացականչութիւնների միջից՝ արհամարհոտ արգահատանաց մի հայեացք միայն ձգելով մոլար ամբոխի վերայ, իւր հերոսական ոտքերի տակ տրորելով նորա մատուցած սնուտի փառքի պսակները, «Ծըթ յետս իմ, սնտանայ, զի գրեալ է. Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես» և զՆա միայն պաշտեսցես: Եւ իսպի վերայից աստուածային գլուխը դէպի աշխարհ խոնարհած՝ Նա դուրս է կանչում իւր ընտրեալներին չնչին հրապոյրներով խաբուող ամբոխի միջից. «Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ զգուստր առաւել քան զիս, չէ՛ ինձ արժանի. և որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ՛ ինձ արժանի»— Ո՛ւր է սակայն, առաջ, Աւարայրի նահատակների այն հերոսական հոգին, որ աշխարհի խոստացած բոլոր փառքն ու մեծութիւնն արհամարհել, երկրաւոր սիրոյ բոլոր կապերը քակել ու հրաւիրական այս ձայնին հետեւել պէտք է ստիպէր. ո՛ւր են քրիստոսի այն ծառաները, որոնք Նորան ի մասնաւորի պաշտօն մատուցանելու, խօսքով և գործով Նորա ս. աւետարանի վկաներ լինելու կանչուած՝ համարձակութիւն պէտք է ունենային Պօղոս առաքեալի նման ամեն երկրաւոր հեղինակութիւն զանց առնելու, մեծի ու փոքրի զիմաց կրկնելու և հաստատելու. «Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա քրիստոսի ծառայ ոչ էի»:

կ. վ.